ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2022 թվականի N 2069 - Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասը և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել սույն որոշման N 1 հավելվածում նշված պետական մարմինների ենթակայության փակ բաժնետիրական ընկերություններին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ գույք 1) և ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախա-րարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե)՝ հետագայում օտարելու նպատակով:

2. Որպես նվիրատվություն Հայաստանի Հանրապետությանն ընդունել սույն որոշման N 2 հավելվածում նշված պետական մարմինների ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող

տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ գույք 2) և ամրացնել կոմիտեին՝ հետագայում օտարելու նպատակով:

3. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, սույն որոշման առաջին հավելվածում նշված փակ բաժնետիրական ընկերությունների և երկրորդ հավելվածում նշված պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների հետ համատեղ, ապահովել գույքի 1-ի և գույք 2-ի նկատմամբ Հայաստանի Հանրապետության անունից նվիրատվության պայմանագրերի կնքումը և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ դրա հետ կապված, ինչպես նաև գույքի պետական գրանցման (հաշվառման) ծախսերն իրականացնելով վերջիններիս միջոցների հաշվին:

4. Սահմանել, որ սույն որոշման 3-րդ կետում նշված աշխատանքների կատարման նպատակով NN 1 և 2 հավելվածներում նշված տրանսպորտային միջոցները ենթակա են տեղափոխման կոմիտեի պետական շարժական գույքի պահառության նպատակով հատկացված՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 հասցեում գտնվող պահառության վայր՝ հանձնող կողմի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ